ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» հուլիսի 2016թ. N 54

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N544-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության թիվ 21 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 22-ի N19-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության թիվ 20 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 22-ի N25-Ա և N33-Ա որոշումները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Այգեվան, Փշատավան և Աղավնատուն համայնքապետարաններում ընդունման-հանձնման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ա. Ղուկասյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 15 աշխատանքային օրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետին (Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2016 թվականի հունիս 2-ի
N 57 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ղուկասյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ.

Անդամներ՝

Գ. Հովհաննիսյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ.

Մ. Սարիբեկյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանությաբ վարչության գյուղատնտեսության բաժնի պետ.

Լ. Հարությունյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի իրավաբական բաժնի գլխավոր մասնագետ.

Ս.Սարգսյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ.

Ա. Պողոսյան — -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

Հանձնողներ՝

Այգեվան համայնքի նախկին ղեկավար՝ Սպարտակ Էքիզյան

Փշատավան համայնքի նախկին ղեկավար՝ Ռաֆիկ Ստեփանյան

Աղավնատուն համայնքի նախկին ղեկավար՝ Աշոտ Գրիգորյան

Ընդունող՝

Այգեվան համայնքի նորընտիր ղեկավար՝ Հրաչյա Հովհաննիսյան

Փշատավան համայնքի նորընտիր ղեկավար՝ Ազատ Քյարամյան

Աղավնատուն համայնքի նորընտիր ղեկավար՝ Գնել Մաթևոսյան

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***